

Ա Ր Զ Ա Գ Ա Ն Գ Ն Ե Ր

Աշխարհին ձեջ անձանթ
Կը քընանայ ձայն ճանխօս.
Քայլերովը սոսկ կըրնայ
Հանդիսան անոր խանգարուիլ,
Ո՛վ դու գաւակ Ովկէանի...:

ԱՍԻԱ.— Ի՛նչպէս խաղերն՝ ուռեցող բամբին ձեջ
կ'ընկուզին:

Ա Ր Զ Ա Գ Ա Ն Գ Ն Ե Ր

Ո՛հ Հետեւէ՛, Հետեւէ՛,
Քարայրներէ խորամէջ,
Մինչ մեր երգը կ'այնծըփի, Հետեւէ՛,

Մառաստանին ցօղերուն ձեջ ցերեկեայ,
Անտառէն ու աղբիւրներէն, լիճերէն
Ու բազմաձայլ լեռներէն,
Դեպ ի ճեղքերն ու վիհերն ու անդունդներն,
Ուր երկիրը կճկուփերէ Հանդչեցաւ,
Այն օրը երբ՝ բաժնըլեցանք, ան եւ դուն,
Միանալու Համար Հիճա զիրկընդխառն,
Ո՛վ դու գաւակ Ովկէանի...:

ԱՍԻԱ.— Եկո՛ւր, քաղցրիկ Պանթէա՛. ձեռքըդ
ձեռքիս օղակէ՛,
Եւ Հետեւէ՛, քանի զեռ այս ձայնիւր չեն ծարած:

Թարգմ. Յ. ԱՆՏՈՆԵԱՆ ԵԷԼԻ
(Ճարուեակիլի)

ՊՈՒՔՐԷՇԻ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵԱԸ

(ՄԱՍՆԱԻՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ‘ԱՆԱՀԻՏ’Ի)

Թէեւ քիչ մը ուշ, բայց Անահիթը կ'ար-
ժէ որ լրիւ ծանօթացնէ դէպքը որ Պուք-
րէշի Հայ Արուեստի Յուլցահանդէսը եղաւ:
Նախ որ օրաթերթերու մէջ կարելի չեղաւ
տալ անոր ամբողջական պատկերը: Յետոյ
դէպքը, ինքնին, արժանի է մանրամասնու-
թեամբ ներկայացուելու: Առաջին փորձն
էր ան օտարին ծանօթացնելու Հայ ար-
ուեստը իր բոլոր կարելի ճիւղերով. եւ
Հակառակ որ ան կազմակերպուած էր գա-
ղութի մը Համեստ սլայմաններուն մէջ՝
գտաւ աննախընթաց ընդունելութիւն մը:

մըն էր որ ցուցահանդէսին նախաձեռնու-
թիւնն ունեցաւ, բայց ան դժուար թէ մար-
մին առնէր եթէ չվայելէր Հովանաւորու-
թիւնը Հայ ժողովուրդի ու իր մշակոյթին
մեծ բարեկամին՝ ուսուցչապետ Նիքօլա
Եռուկայի: Յուլցահանդէսը կազմակերպուե-
ցաւ Հարաւ-Արեւելեան Եւրոպայի Ուսում-
նասիրութեանց կաճառին անունով, Հայ
յանձնախումբի մը կողքին ունենալով
մասնագէտներէ կազմուած ժիւռի մը՝ ան-
դամակցութեամբ Թանգարանի տնօրէն
Իօն Սթէրլատիի, Գեղարուեստից Դպրոցի
տեսուչ Բամիլ Ռէսուի եւ Դրամագէտներ-
ու Ընկերութեան նախագահ Փրօֆ. Տօթթ.
Կէօրիկէ Սէվէրիանով:

Հայ մտաւորականներու փոքր խումբ

Յուցահանդէսին մասնակցեցան Վենե-տիկի Միխիթարեան Միաբանութիւնը, Եւրոպայի Հայ Կարգիչներու «Անի» իմբակ-ութիւնը, Ռուսմանահայ Կեդր. Մատենա-դարանը, Պուրբէշի Սիմոն Մանուկասը, Պոթօշանի, Պուրբէշի Պրանայի, Բիշնէվի, Քոնսթանցայի, Ֆօքշանի, Կալացի, Կեռլայի, Եաշի, Ռոմանի, Սիլիսթրէի եւ Սուչովայի Հայ եկեղեցիները, Քոնսթանցայի «Արաքս» Միութիւնը, եւ բազմաթիւ Հայրենակից-ներ զանազան քաղաքներէ: Դժբախտաբար կարելի չեղաւ ապահովել մասնակցութիւ-նը արտասահմանի կարգ մը Հայ Հաստա-տութեանց՝ որոնց վրայ յոյս դրեր էին նախաձեռնողները եւ որոնք, անշուշտ, պի-տի կարենային շեշտել ցուցահանդէսին յաջողութիւնը:

Յուցահանդէսը ունէր 15 բաժիններ: Նկարչական բաժնին մէջ նկարներ ու-նէին Այվազովսքի, Ալպան Արամ, Արեան Երուսնդ, Աւագեան Հրամզ, Աւետիսեան Օննիկ, Բաբայեան Տիկլիս Արմինիս, Բա-շինջադեան Գէորգ, Գալուստ, Գ. Շահնա-զար, Խաչատուրեան Սարգիս, Մախոխեան Վարդան, Շահին Էտկար, Շիլթեան Գրի-գոր, Շիշմանեան Ռաֆայէլ, Ոսկան Եր-ուանդ, Պալթագար Աբգար, Սարուխան Ա-լիքեան, Վարդանեան Բարթող, Քէյսապ-ճեան Մեղվոն: Յուցագրուած էին, ընդա-մէնը, 116 նկարներ, որոնք գրաւած էին ամբողջ սրահ մը: Կային նաեւ երկու Հին սրբանկարներ՝ ԺԸ. դարու գործ՝ տրամա-դրուած Պուրբէշի եւ Պոթօշանի Հայ ե-կեղեցիներէն:

Մանրանկարչական բաժնին մէջ կային 40 ձեռագիրներ, ԺԳ.—ԺԷ. դարերուն գրուած, մեծ մասամբ Աւետարան եւ Ճաշոց, ու մէկ քանին Յայմաւարք, Սաղոս, Կանո-նագիրք, Մաշտոց եւ Խորհրդատեսութիւն:

Ճարտարապետութեան բաժինը կը բաղկա-նար 81 մեծադիր լուսանկարներէ որոնք կը ներկայացնէին Հայաստանի զանազան եկեղեցիները եւ անոնց յատկազօծիչը՝ յատկապէս պատրաստուած Քօտաք Հաս-

տատութեան կողմէ: Ամբողջ նրբանցք մը յատկացուած էր ասոնց:

Փորագրութեանց բաժնին մէջ ցուցադրու-ուած էին 77 առարկաներ.—Վանի, Կ. Պոլ-տոյ, Տրապիզոնի եւ Կովկասի ոսկերչական աշխատանքներ, նշխարքի կաղապարներ, եւ այլն:

Խորանի վարագոյրներ, 10 էին թիւով, և կը զարդարէին սրահի մը ամբողջ պա-տերը:

Տպագրութեանց բաժնին մէջ ցուցադրու-ուած էին 38 ընտիր տիպեր՝ ԺԶ.—ԺԸ. դա-րերուն լոյս տեսած Վենետիկ, Կ. Պոլիս, Իզմիր, Լէմպէրիկ, Վիեննա, Էմփաձին, Ամսթերտամ, Մատրաս, եւ այլն:

Կողերու բաժինը կը պարունակէր 15 կաշեայ եւ արծաթեայ կազմեր՝ ԺԷ.—ԺԸ. դարերու աշխատանք:

Յախճապակիներ, Քէօթահիւյ գործ, երեք էին թիւով, Ժիւռին ընտրած ըլլա-լով ամենէն ինքնատիպերը միայն:

Իրամներու բաժինը կազմուած էր 15 կտոր դրամներէ՝ Տիգրանի, Արշակի, Հե-թումի եւ Լեւոններու:

Գորգեր ինն էին թիւով, ոմանք Հայ-կական Հին գորգեր, եւ միւսները իբր նը-մուշ Հայերու կողմէ Ռուսմանիոյ մէջ շին-ուած ընտիր գորգերու:

Ձեռագիրներու բաժինը կը պարունակէր 115 կտոր զանազան Հայկական բանուածք-ներ (օյա, սիվալ, սիւզեմի, եւ այլն):

Տարագներ 11 Հատ էին և կը ներկա-յացնէին Ալեքսանդրապոլի, Սալմաստի, Վանի, Ակնի, Տրապիզոնի, Ախլցխայի կա-նացի տարազներ, ինչպէս նաեւ եկեղեցա-կան Հանդերձանքներ (Եսիկոպոսի, քա-հանայի, սարկաւազի, տիրացուի), այս վեր-ջինները բոլորն ալ Հին գործեր:

Երաժշտական գործիքներու մէջ ցուցա-դրուած էին քէմանչէ, թառ եւ ծնծղայ, այս վերջինը արտագրութիւն Զիլճեան արհեստանոցին:

Հայ արդի մամուլը կը կազմէր առան-ձին բաժին մը իր 66 նմուշներով, ցուցա-դրուած առանձին սեղանի մը վրայ:

Մասեցազարանք՝ բաղկացած օտար լեզուներով բազմաթիւն Հայագիտական երկերէ՛ գրուած էր այցելուներու տրամադրութեան տակ:

Յուցադրութեան դրուած էին ընդամէնը 643 առարկաներ՝ աւելի քան Հազար իրերու մէջէն ժիւղիկն կողմէ ընտրուած:

Յուցահանդէսը գտաւ ընդունելութիւն մը, զոր ոչ իսկ կ'երագէին նախաձեռնողները: Ու այդ՝ առաջին իսկ վայրկեանէն: Անոր համար էր ստեղծուած այս յանկարծական խանդավառութիւնը՝ որովհետեւ Հայկ. արուեստը, հոգ չէ թէ իր ամենէն համեստ նմուշներուն մէջ, յայտնութիւն մըն էր օտարին համար: Ռումէնը՝ ամբողջ վեց դար Հայուն հետ կողք կողքի ապրած՝ անոր շինարար գիծը միայն կը ճանչնար: Անձանօթ էին իրեն հայ ժողովուրդին մտքի ճիւղերը, նոյն իսկ այն նմուշները զոր Հայը հետը բերած էր այս հիւրընկալ ասիերը, պահպանելով իր եկեղեցիներուն մէջ: Ասիթ մը պէտք էր անոր բանալու համար մեր հոգեկան վանձերը, եւ ցոյց տալու տալու թէ Հայերս սուրճ խարկող, կօշիկ կարկտող, գորգ նորոգող, քիչ մըն ալ չարչի աս ժողովուրդը չենք միայն...

Այցելուները, թիւով թէ որակով, գլեցին ամէն նախաձեռնութիւն: Կրնանք բռնել թէ ցուցահանդէս այցելեց Պուքրէշի բովանդակ ընտրանին: Ի միջի այլոց. — թուելու համար գլխաւորները. — ցուցահանդէս այցելեցին Քարոլ Թագաւորը՝ պալատան մարաշախա՝ Զօր. ԻլիսէսՎիչի եւ պալատան փրէֆէքթ՝ Վնդ. Քօմսէէսքուօի հետ, Մարիա Թագուհին՝ պատուոյ տիկին Քանթէմիրի. հետ, Էշխանուհի Իլիանա՝ պատուոյ տիկին Լահօվարիի հետ, Իսանուլթեանց եւ Արուեստից նախարար Պ. Մօլտօվանու, պապական նուիրակ Մօն. Տօլչի, իտալական, լեհական, հոլանտական, սպանիական դեսպանները եւ միւս պետութեանց հիւպատոսները, բարձրաստիճան պաշտօնատարներ եւ ներկայացուցիչներ

գանազան նախարարութիւններէ, Պուքրէշի ընդհ. քաղաքապետ Պ. Տօպրէսքու եւ չորս թաղամասերու քաղաքապետները, Աօֆիայի լեհ դեսպանը, եւրոպական թերթերու բազմաթիւ թղթակիցներ, փրօֆէսէսօրներ եւրոպական եւ ամերիկեան համալսարաններէ, բազմաթիւ նախկին նախարարներ ամէն կուսակցութիւններէ, համալսարանի փրօֆէսէսօրներ, Ակադեմիոյ անդամներ, Պուքրէշի բոլոր թանգարաններու տնօրէնները, բազմաթիւ գորավարներ, բոլոր յայտնի նկարիչները, ճարտարապետները և քանդակագործները, գրական ակադեմոր դէմքեր եւ արուեստի բոլոր քննադատները, և վերջապէս ինչ որ Պուքրէշը իր մէջ կը հաշուէ իբրեւ մտքի եւ արուեստի մարդ, առանց հաշուելու հայ հանրութիւնը որ կիրակիէ կ'իրակի կը լեցնէր ցուցահանդէսի սրահները:

Ռումէն մամուլը շատ քիչ անգամ այսպէս միաձայն գտնուած էր գրուածութեան համար արուեստի արտայայտութիւն մը: Հայ արուեստի ցուցահանդէսին վերապահած իր բացառիկ գնահատութիւնը վեր էր ամէն նախտեսութեան: Խանդավառ սիւնամիներ նուիրեցին գրեթէ բոլոր թերթերը՝ ի վեր հանելով մամուլորպէս այն պարագան թէ հայկական այս ցուցահանդէսը պատուաբեր ձեռնարկ մըն էր նոյն իսկ Ռումանիոյ մայրաքաղաքին համար: Ու որպէս զի մեր ցուցահանդէսին վերապահուած այս բացառիկ ընդունելութիւնը կարելի ըլլայ չափել ըսենք թէ ումէն թերթերը հազիւ քանի մը տող նուիրեցին լեհաստանի այսինքն դաշնակից պետութեան մը կողմէ կազմակերպուած ցուցահանդէսին, որ բացում էր մերինէն քիչ մը անդին, միեւնոյն օրերուն:

Յօդուածներու շարքը բացաւ մեծանուն ուսուցչապետը փրօֆ. Եօնկա, որ իր թերթին նեանու Ռոմբեքսի մէջ հրատարակեց դրուատալից խմբագրական մը ցուցահանդէսի բացման առթիւ: Այն խմբագրականը, զոր արտատպեց նաեւ Տիմիիացա

մեծ օրաթերթը, կ'ըսէր թէ «կազմակերպիչները վեր են ամէն գոզասննքէ այն գեղեցիկ ու օգտակար ձեռնարկին համար զոր դուռն հանեցիր աշխարհի ջանքերով» ու կ'ընդգծէր ցուցահանդէսին յատկանշական կողմերը:

Քուվերնուլ օրաթերթը «Pro Armenia» խորագրին տակ կ'ը հրատարակէր սիրով ու յուզումով բարեխոն յօդուած մը ուր կ'ըսէր թէ «Պէտք է խոնարհիլ արուեստի այս արտայայտութեան առջեւ, եւ դիտել այն երկիւղածութեամբ, յարգանքով ու գեղեցիկագիտական խոր զգացումով զորս կ'ը պարտագրեն մեզի նրբաճաշակ եւ գեղարուեստի սիրահար ժողովուրդի մը յօրինած այս առարկաները»:

Օմուլ Լիպեհ, նախկին նախարար եւ փաստաբանական կաճառի նախագահ Իօն Ծլօրէսքուի օձկանը, կ'ըսէր. «Խիստ տաժանելի է ազգային-ցեղագրական ցուցահանդէսի մը կազմակերպիչի գերը: Հազիւ երէկ ըմբռնեցինք այս իրողութիւնը երբ այցելեցինք Հայ Արուեստի Յուցահանդէսը: Նիւթեր հաւաքել, յաճախ զաննք հեռուոր վայրերէ բերելով, դասաւորել եւ երեք սահմանափակ սրահներու մէջ գետեղան ու բոլորը ոչ միայն գեղարուեստագետն ու պատմական պատկանելի պաշար մը կ'ը պահանջեն, այլ նաեւ հասարակելի ու ոգի եւ տարածութիւնը օգտագործելու ընդունակութիւն»:

Ունիվերսուլ կարեւոր օրաթերթը, որ այնքան ժլատ է օտարներուն տող նուիրելու, կ'ը գրէր ընդարձակ յօդուածի մը մէջ. «կազմակերպիչ յանձնախումբը կ'ը բացած է հաւաքել գեղարուեստական անցած անհատներէ արժէքով գոհարներ, եւ զանոնք ի ցոյց դնել իբր նմոյշ փառաւոր անցեալի մը: Հայկական հոգին, որ միեւնոյն հալածանքներն ու նուաստացումները կ'ը բնի ինչպէս մեր ժողովուրդը, կ'ապրի լուսապանծ, յաւիտենապէս երիտասարդ և լիահաւատ թէ իր հայրենիքը յարութիւն պիտի առնէ գարաւոր նուաստացումներէն եւ շղթաներէն: Այն ստեն այսօրուան

ուխտաւորները ետ պիտի տանին արուեստի գոհարներ, զորս՝ փոխանակ կորսնցնելու օտարութեան մէջ՝ պահպանեցին սրբութեամբ ու զարգացուցին»:

Վիլիբորու, ազատական կուսակցութեան օձկանը, կ'ը գրէր. «Մեր մայրաքաղաքին տրուեցաւ հիւրընկալել Հայ արուեստի առաջին ցուցահանդէսը: Ան իր պարունակած գեղեցիկ եւ շահեկան առարկաներով կ'ընայ մեծ հետաքրքրութիւն յառաջ բերել եւրոպայի որ եւ է մէկ քաղաքին մէջ: Ինչ որ հետաքրքրական է մեզի համար, այն է որ պարզօրէն կ'ը սեննուի ազգեցուցիչը զոր հայ եկեղեցիներու ճարտարապետութիւնը ունեցաւ Մոլտովայի մեր եկեղեցիներու շինութեան վրայ: Անհաշուելի արժէք ունին ցուցագրուած այս խորանի վարագոյրները, ճարտարապետութեան նմոյշները եւ ձեռագիրները եւ կ'ը բնան փառք կազմել աշխարհի որ եւ է մեծ թանգարանին: Բոլոր ցուցագրուած առարկաները ցոյց կուտան յատկանշական անձնականութիւնը այն ժողովուրդին որ այնքան տառապեցաւ գարբու ընկացքին»:

Յուցահանդէսով զբաղեցան նաեւ, — համակրական տողեր նուիրելով, — Քուրեհնուլ, Նաճա Իկէ (ռուսերէն), Լեհեկանցան Պելմ (ֆրանսերէն), Պուրեհսքեր Թակայար (գերմաներէն), ինչպէս նաեւ վարչաւական եւ վիեննական թերթեր:

Յուցահանդէսը անվերապահ համակրութիւնը գրուեց նաեւ ուսմէն բոլոր արուեստի քննադատներուն, նոյն իսկ անոնցմէ ամենէն բժանդիրներուն: Բոլոր քննադատներն ալ կ'ը շեշտեն թէ Հայ արուեստը ճշմարիտ յայտնութիւն մը կ'ը նշել իրենց համար, անակնկալ մը, որուն ետին սպասեր երբեք, Հայ ժողովուրդի մշակութային արժէքներուն մասին ցարդ տարտամ գաղափար մը կազմած ըլլալով միայն՝ եւրոպական գրքերու մէջբերումներէն կամ թերթերու հարեւանցի ակնարկներէն:

Ատրիան Մանիւլ, յայտնի գրագէտ եւ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՅԿԱԳ ԽՈՐԱՆԻ, շինուած 1757 թ. (որ տեսակին մեջ գտնուողոց մը որ նկարագրուիլ ցրուեց բոլոր այցելուներուն): Կը պատկանի Յոթեանի հայ նիկոնացիին:



քննադատ, կը գրէր Տիմիեիացա օրաթերթին մէջ. «կը գտնուէիք մշակութային բացառիկ գէպքի մը առջեւ ... Այս բոլորը աւարացոյցներն են Հայոց Հիմ եւ անգուգահան մշակոյթին, — հազուագիւտ ծաղիկ գոր ամէն դարու, Արեւելքի մէջ, կը Հնն-ձէիկ բարբարոս ձեռքեր: ... Կարելի է ճշդել այն նպատը զոր այս ժողովուրդը բերած է մեր եկեղեցիներու կառուցման —ինչպէս արուեստի գլխիէ բոլոր կալուածներուն մէջ— եւ այն մասնակցութիւնը զոր ան, հակառակ իր թափառական կեանքին, յամառ աշխատանքով ու ամուր կամբով, բերած է զինք հիւրընկալող ժողովուրդներուն: ... Հայկական ցուցահանդէսը արժանի է տեսնուելու եւ խորհրդածուրդ են ներարեկու» ճշդելու համար անոր ճշմարիտ սեղը մ'արդկային քաղաքակրթութեան մէջ:»

Գեղարուեստից վարժարանի ուսուցչուհի եւ յայտնի նկարչուհի Տիկին Չէչիկիա Քուցէսքու Շիօրք հետեւեալ կերպով կը ներկայացնէր իր գրուատախան յօդուածը կառավարութեան օսկան Տրեփարթաի մէջ. «Այս ցուցահանդէսը, Պուքրէշի բնակիչներուն համար, արուեստի սոմախմբութիւն մըն է, իսկ գեղարուեստից վարժարանի աշակերտներուն համար չկայ զարգացման աւելի յարմար առիթ քան հիացմունքով դիտել այս բոլոր իրերը որոնք այնքան արժէք ունին որքան օտար երկիրներու մէջ ցուցադրուածները՝ զորս տեսնելը վիճակուած է միայն փոքրաթիւ բախտաւորներու:»

Քուկրքուլ օրաթերթին մէջ ծանօթ քննադատ եւ ցեղագրական թանգարանի վարիչ Պ. Մաք Քօսթանիկէնէքու՝ ընդարձակ ուսումնասիրութեան մը մէջ կը գրէր. «Պաշտօնական Սալմէն յետոյ Արուեստից Տաղաւարը հիւրընկալեց այնքան շահեկան եւ այնքան հրահանգիչ արուեստի մը ամբողջութիւնը, այնպէս որ գեղարուեստական եղանակը կը փակուի արժանաւոր ցուցահանդէսով մը: Հրաշալի նմոյշներ գորաւոր արուեստի մը որ կը կրէ հետաւոր

արեւելքի կնիքը: ... Սոյն ցուցահանդէսը ամենամեծ գէպքը կը կազմէ որովհետեւ ան իր տեսակին մէջ առաջինն է ոչ միայն ի Ռուսմանիա, այլ ամբողջ Եւրոպայի մէջ: Փորձաուրութիւնը որ ձեռք ձուցեցաւ այս առթիւ՝ նուրբ յասկութիւններով ժտուած արուեստ մը ներկայացնելու, կրնայ անվախ կրկնուիլ Արեւմուտքի մեծագոյն մշակութային կեդրոններուն մէջ՝ ուր պիտի գտնէ միեւնոյն ջերմ խանդավառութիւնը որուն ապացոյցը սուաւ Պուքրէշի մտաւորականութիւնը: ... Հայկական ցուցահանդէսը գեղեցիկութեան վայելքի էլիքսիր մըն է՝ ուրկէ պէտք է ըմպեն արուեստի բոլոր ծարաւիները:»

Ռաւիա գրական - գեղարուեստական օրաթերթին մէջ գրադիտուհի Տիկ. Քլաւտիա Միլիան կը հրատարակէր առաջնորդող մը՝ ուր կ'ըսէր. «Ամբողջ Հայ արուեստին մէջ այլատէր անանուութիւն մը կայ, որ կ'ուզէ կարծես արագուցանել ցեղի մը ազատագրական մշտատեւ պայքարը եւ շարունակական ժխտումը ետին:»

Կնքտրքարեա օրաթերթին մէջ ուսմէն ծանօթ քննադատ տիկին մը, թանցի Պուրիշիկուան, կը գրէր խանդավառ յօդուածի մը մէջ. «Գէ վարանէի այցելելու սոյն՝ ցուցահանդէսը՝ հիասթափում մը կրելու վախէս: Հիասթափութեան սեղ աւելի քան մէկ ժամուան աննկարագրելի վերացում: ... Ինչ որ ամենէն աւելի կը կը սպաւորէ քեզ՝ ցուցադրուած աւարկաներուն վաւարականութիւնն է: Ըմարտութիւնը հոս չի նկատուի միայն, այլ կը պարտադրուի քեզի: ... Ամբողջ ցուցահանդէսը լաւ կազմակերպուած է եւ իր նպատակին լիուրի ծառայած: Հանրութիւնը վերջապէս ըմբռնեց բազմիցս լուսած այն ճշմարտութիւնը թէ Հայաստան, ստառպանքի երկիրը, գեղարուեստի ներշնչողը եղած է դիւթական Արեւելքի մէջ:»

Արեւիկուլ Լիքերաի մէջ քննադատ Հանրի Պլազիան սապէս կը վերջացնէր իր շաքաթական քրոնիկը. «Հայ Արուեստի ցուցահանդէսը սարուան գեղարուեստական մեծագոյն գէպքերէն մէկն է:»

Ունիվերսուլ կիբեարի գեղարուեստական քրոնիկագիրը Գասէլէի կը գրէր. «Յուցագլորուած իրերը կը կազմեն ճշմարիտ գոհար մը գոր կարելի չէ յօգուածի մը մէջ պատմել: Պէտք է տեսնել զանոնք, որովհետեւ անոնցմէ շատ բան ունինք սորվելիք:»

Յուցահանդէսի ամիսը փրովականստի ամիս մը եղաւ հայ ժողովուրդին եւ իր մշակոյթին համար: Կազմակերպիչ յանձնախումբի ջանքերով Պուքրէշի ուստիօկայանն ալ բերաւ այդ առիթի իր սիրայի րջակցութեան բաժինը, ոչ միայն օրը օրին ի լուր արշարհի հաղորդելով ցուցահանդէսի նորութիւնները, այլ նաեւ իր յայտագրին մէջ ներմուծելով բանախօսութիւններ եւ համերգներ:

Ամենէն առաջ Իրամագէտներու Ընկերութեան նախագահ Փրօֆ. Տքթ. Սէվէրիանուն էր որ ցուցահանդէսին բացման իրիկունս իսկ, Յունիս 15ին, ցուցահանդէսը մանրամասնօրէն ներկայացուց ուստիօկայանէն հետեւեալ կերպով աւարտելով իր գրուատալից ճառը. «Հայկական սոյն առաջին ցուցահանդէսը Ռուսմանիոյ մէջ հնարաւորութիւն կուտայ մեր հանրութեան հիանալու, ուսումնասիրելու եւ դաստիարակուելու գեղարուեստական արտայայտութեանցը առջեւ ժողովուրդի մը, հնդեւրոպական ցեղէ, որ առաջինը եղաւ քրիստոնէութիւնը ընդգրկող, որ իր ցեղային անհատականութիւնը պահեց եւ միեւնոյն ատեն կրցաւ իր արուեստին գրուած գնել ուրիշ ժողովուրդներու վրայ:»

Յուլիս 8ին, միշտ ցուցահանդէսի յանձնախումբին հրաւերով Ռուսմէն Ֆէմիլինիսիներու Ընկերակցութեան նախագահ եւ քաղաքագետական խորհուրդի անդամ Տիկին Հօրթանս Սար-Մարի Պուքրէշի ուստիօկայանէն բանախօսութիւն մը ըրաւ նիւթ ունենալով հայ կինը եւ իր վայելած իրաւունքները անցեալին մէջ, վերլուծելով Հայոց հին օրէնսդրութիւնը կանացի իրա-

ւունքներու մասին եւ եզրակացնելով որ «Հայ կինը, նոյն իսկ հին ժամանակներու մէջ իր ունեցած բնոյթով ու դիրքով, մեծ ազդեցութիւն ունեցած է հայ ժողովուրդի հոգեկան կեանքին մէջ. հայ ժողովուրդի փառաւոր վերելքներու եւ անհատուած դժբախտութեանց պատմութեան մէջ, հայ կինը դիմագիծը կ'երեւայ իբրեւ տիրապետող օճակին, իբրեւ ջերմ աջակիցը այր մարդու բոլոր ճիգերուն, անոր մխիթարիչը եւ ընտանեկան կեանքին ներդաշնակողը. հայ կինը վրէպիժը ամբողջական եւ ամուր մնացած է հայ կեանքի բոլոր ձեւերուն մէջ:»

Իսկ Յուլիս 10ին նոյն ուստիօկայանէն հայ երաժշտութեան մասին ամփոփ բանախօսութիւն մը ըրաւ ուսմէն երաժշտանոցի փրօֆէսէօր ե յոսանի Փօլքօրիտ Պ. Պրայլիլոյու: Ան ընդհանուր ակնարկ մը նետելէ յետոյ հայ երաժշտութեան պատմութեան վրայ և յիշելէ յետոյ անոր շուրջ կատարուած ուսումնասիրութիւնները, եզրակացուց որ «Հայ երաժշտութիւնը ինքնուրոյն մէկ ճիւղէ հնդեւրոպական երաժշտական ոճին, եւ թէեւ, հայ արուեստի ուրիշ մասերուն պէս, կրած է ազդեցութիւնը արեւելեան եւ արեւմտեան ուրիշ ժողովուրդներու, կրցած է սակայն ինքնուրոյն կերպով համագրել զանոնք: Երաժշտութիւնը արուեստի այն կալուածն է որ հայ ժողովուրդը ցոյց տուած է հարուստ եւ անձնական տաղանդ մը: Ինքնատիպ գեղեցկութեան ամբողջ արշարհ մը կայ հայ եկեղեցական երաժշտութեան ծանր, խորունկ եւ յուզիչ մեղեդիներուն մէջ՝ լի պարզութեամբ, բնականութեամբ եւ շնորհով, ինչպէս նաեւ հայ բազմաթիւ ժողովուրդական երգերուն մէջ՝ ուր կարելի է գտնել միամիտ եւ զգայուն արուեստ մը, թարմ եւ պէսպիսուն կեանքով թրթրուուն:» Պ. Պրայլիլոյուի բանախօսութեանէն յետոյ Պուքրէշի կոմիտաս երգչախումբը երգեց Անէն Հայր Սաբրը եւ Տեղործեան, եւ չորս ժողովուրդական երգեր կոմիտաս վարդապետէն. Օր. Արաքսի Սվա-

ճեան երգեց երկու մեներգ, իսկ սող - է-
լէքթրումաքնէթիքով հաղորդուեցանք քանի
մը մեներգներ Շահմուրատեանէն:

Յուցահանդէսին առթիւ լոյս ընծայ-
ուած էր գեղեցիկ ալպով մը, ուր գետեղ-
ուած էին զանազան էջեր Փրօֆ. Եօսկայէ,
Շարլ Տիլէ, Պալ շէ, Լուի Լյուսայէ, Արշակ
Զօպանեանէ, Ֆրէշարէրը Մաքլէրը, Քարլ
Ռօթէ, Ժաք սը Մօրլանէ եւ ուրիշներէ՝
հայ արուեստի զանազան արտայայտու-
թեանց մասին (ճարտարապետութիւն, նը-
կարչութիւն, յախճապակի, գորգ, պար,
գրականութիւն, եւայլն): Ալպովը կը պա-
րունակէր նաեւ 50ի չափ նկարներ մեծ
մասամբ արտասուլուած Roseraie d'Ar-
ménieէն:

Բայց կ'արժէր երկու խօսք ալ ըսել
ցուցահանդէսին ամենէն շահեկան առար-
կաներուն վրայ: Ինչ խօսք որ ամենուն
հիացումը պիտի գրաւէր, նախ, ցուցահան-
դէսին ճարտարապետութեան բաժինը: Ռ-
րովցետեւ ամենէն աւելի ան էր որ
յայտնութիւն մը կ'ըլլար օտարին: Կար-
ծես մէկը չէր սպասեր որ գարեբուն հետ
տանջուած ու հալածուած այս ժողովուր-
դը՝ կրցած ըլլար ստեղծել այնպիսի ինք-
նուրոյն ճարտարապետութիւն մը, որ իր
ոճը փոխանցած ըլլար Արեւմուտքին: Ա-
մենէն աւելի ուշագրուութեան առարկայ
գարձան էջմիածինը (483), Տեկորը (486),
Երբուրը (500), Զուարթնոցը (640), Ադ-
թամարը (915), եւայլն: Դիտողներուն
գլխու պտոյտ կուտար մանաւանդ թուա-
կանը այս ճարտարապետական հրաշա-
կեաներուն, եւ մտածուած թէ անոնց
ոճին վրայ ձեւուած են յաճախ իրենց,
Ռուսիաներուն եկեղեցիներն ալ...:

Հայկ. ձեռագիրները եւս հիացումի ա-
ռարկայ եղան: Ասոնցմէ երկուքը, մանա-
ւանդ, Վենետիկէն բերուած, բոլոր այցե-
լուներուն գմայլանքը շարժեցին: Մէկը
Աւետարան մըն էր, 1331ին Դրազարկ
գրուած, գործ Սարգիս Պիճակի, հայ ման-
րանկարչութեան հրաշալիքներէն մէկը:

Երկրորդը Սաղմոս մըն էր, 1629ին Պուխ
գրուած, գրիչ ունենալով Յակոբ Լեհացին,
գարձեալ գուռիս-գործոց մը մանրանկար-
չութեան, զանազան էջերու մէջ ցրուած
20է աւելի նկարներով, որոնցմէ ոմանք ի-
րապաշտ՝ իրենց նիւթովը: Բայց ինչ որ
բացատիկ այժմէութիւն մը կուտար ման-
րանկարներու բաժինն, այն տաննակ ալ
ձեռագիրներն էին որոնք դարեր առջ
գրուելը էին նոյն իսկ այս գաղութին մէջ:
Այսպէս, կային ձեռագիրներ գրուած Սու-
չովա, Աբբէրման եւ Եաշ, վկաները հին
շէն գաղութի մը որ ունեցեր է նաև մտքի
ճիգեր իր եկեղեցիներուն եւ վանքերու
խուցերուն մէջ, և արտաբեր մանրանկար-
չութեան քանի մը ընտիր նմուշներ: Ցու-
ցաբրուած ձեռագիրներուն կարեւոր մէկ
մասն ալ գրուած էր կաֆա, ի Սրիմ, որ
ԺԳ.—ԺԴ. դարերուն եղած է քոյր գաղութ
մը Մոլտովային, ու երկար ատեն պահպա-
նած առեւտուրի եւ մտքի կապերը անոր
հետ: Մանրանկարչութեան բաժինն մէջ
ի ցոյց գրուած էին նաեւ համայնիւններ՝ ո-
րոնք զեռ սրբութեամբ կը պահուին ու-
մանահայ հին գերգաստաններու մէջ, իը-
րեւ տեսակ մը մասունք:

Նուազ հիացում չպատճառեցին նաեւ
խորանի վարագոյրները: Ասոնք 10 էին թի-
ւով, 3 Ֆօքշանէն, 3 Պօթօշանէն եւ մէյ-
մէկ հատ Սուչովայէն, Եաշէն, Կալացէն
ու Վենետիկէն: Կորուած հայ արուեստի
մը բեկորներն էին ասոնք, որոնց ժամբով
յառած կը մնային այցելուները: Շահեկան
է յիշել թէ ասոնք բոլորն ալ ԺԷ. դարու
գործ են, ինչպէս են, օրինակի Տամար, էջ-
միածնի վարագոյրները: Եւ մ'հնչեա էջ-
միածնի ունեցածները ստացուած են հե-
ռուոր Հնդկաստանէն, մ'եր գաղութիւնները,
մեծ մասամբ, շինուած են Եւգոսիա. հայ
վարպետներու ձեռքով, յատկապէս ալըս-
պըրուած Մոլտովայի հայ եկեղեցիներուն
համար՝ տեղացի հայ բարերարներու
կողմէ:

Յուցահանդէսին գտած այս աննախըն-
թաց ընդունելութիւնն էր որ նախաձեւ-

նողները գրգեց հիմը դնելու մնալուն գործի մը, Հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերակցութեան, որուն գլխավոր նպատակը պիտի ըլլայ Հայ մշակոյթը ճանչցնել եւ սիրցնել Հայուն եւ օտարին, ու աշակցել Հայ մշակոյթի վարդաքաման: Իր այս նպատակը իրագործելու համար Հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերակցութիւնը՝

Ա. Պիտի հիմնէ Հայ արուեստի մնալուն թանգարան մը Պուքրէշի մէջ. այս կերպով ան կորուստէ փրկած պիտի ըլլայ նախ Հայ արուեստի բեկորները որոնք ցանցուած են օտար ափերու վրայ. եւ յետոյ ան առիթը տուած պիտի ըլլայ օտարներուն որպէս զի շօշափեն փաստերը այն աղուոր ճիգին զոր մեր ցեղը ի սպաս դրաւ քաղաքակրթութեան համար:

Բ. Պիտի հաստատէ Հրատարակչական մը՝ որպէս զի մանուկներուն եւ տարէցներուն ձեռքը անպակաս ըլլայ Հայ գիրքը գաղութներու մէջ, եւ օտարները գրքերով ալ ճանչնան մեր ցեղն ու իր ճիգերը:

Գ. Պիտի հիմնէ Հայ Տուն մը ռումէն մշակոյթի ոստանին վալէնիի մէջ, իբրեւ շաղախ Հայ եւ ռումէն մտքի եղբայրակցութեան, որպէս զի հոն երթան օթեւանիլ Հայ մտաւորականներ՝ զիրենք հիւրընկալող ցեղը, անոր լեզուն ու պատմութիւնը ճանչնալու համար փրօֆ. Նիքուա Եօկայի շունչին տակ:

Դ. Պիտի հաստատէ նաեւ կենդանի խօսքը՝ սարքելով դասընթացքներ, բանասիրութիւններ եւ ասուլիսներ, նուիրուած Հայ ժողովուրդին եւ իր մշակոյթին:

Ե. Պիտի ստեղծէ առիթներ որպէս զի ծանօթացուին Հայ երգն ու բեմը:

Զ. Պիտի ունենայ իր մատենադարանը՝ ուր Հայեր թէ օտարներ պիտի գան սերտել ու ճանչնալ մեր ժողովուրդը:

Է. Պիտի կազմակերպէ Հայ արուեստի ցուցահանդէսներ Պուքրէշ թէ ալ ուր՝ Հայ մշակոյթի քարոզութիւնը պարտցնելով քաղաքէ քաղաք ու երկրէ երկիր:

Ը. Պիտի տօնէ յիշատակը անհետացած մտքի վարպետներուն ու պիտի ծանօթացնէ անոնց գործը. պիտի տօնէ նաեւ վաստակաւորները՝ սիրովեւ Համար զանոնք իրենց խոնջէնքին մէջ: Պիտի պատուէ նաեւ Հայ եւ օտար հիւրերը՝ որոնք ծառայած են Հայ մշակոյթին:

Թ. Պիտի կապ պահպանէ Հայ մշակութային հիմնարկութեանց հետ՝ բոլոր գաղութներու ազնուագոյն տարրերը համագործակցութեան կապելու համար արուեստի ու մտքի գետնին վրայ:

Առաջագրութիւններն են ասոնք հիմնարկութեան մը որ ուղղակի ծնունդն է Պուքրէշի Հայ Արուեստի Ցուցահանդէսին: Կանուխ է անշուշտ գուշակութիւններ ըսնել այժմէն անոր գործունէութեանը մասին, բայց կ'արժէր ընդգծել գէպքը: